

ամմենքը ոտքը պագին, ու զինքը աղէկ մը տեսան. վէ ամմենուն մէկ մէկ մենծ արծթէ միտալ տուա...: Ասանկ սրբազան փափ տահայ չէր եղեր, որ հայոց վրայ այսչափ սէր ունենայ: Հոսմայու մէջ պագը հովառտայ մարդիք Ֆոէնկին ազգէն՝ պաշլայեցին մասխարայ ընել զպագի խըխսըզ հայերը: Ե[ր]բոր աս բանս սրբազան փափին անկածը հասաւ, շուտ մը սրզողեցաւ, նզովք հանեց, խիստ եասախ ըրաւ, որ մարդ մէկ մըն ալ հայոց ազգին ափեղցփեղ բան չի խօսի: Ասով խանահաթ չըրաւ. շուտ մը ինչխըտար եասախճի կայ նէ, ամմէնուն թէմպէհ ըրաւ, որ Հոսմայու մէջ Ֆոռլֆոռլ պտըտին. էյէր որ մէյ մը տեսնեն, որ հայոց ազգին լեզու կերկնցնէ, շուտ մը ծեծելով բոնեն զընտանը դնեն: Մէկ օր մը մէկ իփսիզ մարդ մը Ֆոէնկի ազգէն՝ խենթեցաւ, ելաւ մէկ խեղճ հայ մը մասխարայ ըրաւ. ըսելով. սէլամմալէք. սէլամմալէք: Աս ըսելիինի չես գիտեր ինչպէս՝ ան սահաթը եասախճիները վրայ հասան, բոնեցին, զլիտուն ծեծելով զընտանը խօթեցին: Յետոյ ան խեղճին կնիկը, տղաքը, վէ ազգականները եկան լալով հայոց ոտքը ինկան, որ երթան սրբազան փափին իրիճայ ընեն, որ իրենց մարդը ազատուի: Ասոնք ալ ողորմեցան, զնացին իրիճայ ըրին. ամայ միւնքիւն չեղաւ, որ թող տային. զէրէ սրբազան փափը խիստ սրզողեր էր...:

Յամի Տեառն 1750
Յունվարի 22
[վենետիկ]

Նուաստ Ծառայ
Մկրտիչ տրուպ վարդապետ

ՃԽԹ.

Քահանայապետանիստ քաղաքին մէջ ուխտաւոր Հայութեան վաստկած բարի անունն ու զովեստները կը լսենք մեր պատկերահան Յովհաննէսէն:

Գերյարգելի և զերսպատուելի Հայր Եղիայ վարդապետին
յարգուշեաւք ողջոյն մատուցանեմ

... Երնունդեան օրերն երբ սուրբ դուռն բացվեցաւ 166 անձինք կային հայք արք և կանայք, ամիս 18 երբ սուրբ երրորդութեան քօմբանիայի եղբարց թափոռով սուրբ Պետրոս զնացին և երեկոյի ընդրիս եղև, էին 132. յաժմօ կարծեմ շուրջ 110 անձինք են. թէպէտ ըսկսբաննէ սուրբ տարոյն բովանդակ եկողաց երկիրն և անունն գրել կուտամ որ սուրբ տարվան վերջն իմացվի թէ որքան անձինք ուխտավորք եկին... կարճ բանիւ միայն զայս ասեմ, իրաւի այս միջոցիս հայոց պարկեշտութիւնն և ջերմեռանդուութիւնն յոյժ բարի որինակ տվաւ քաղաքացոց, մանաւանդ զովեցան սուրբ հայրապետէն և կարտինալաց, նակ այլոց մեծամեծաց. ևս այսքան բազմութիւն զանազան երկրէ ի միասին բնակեալ՝ ի միջի նոցին խրովութիւն կամ կոխ չեղաւ. տեղդ եղեալ Սարգիս եպիսկոպոսն սուրբ ժողովին գրած է թէ զատկին կամիմ Հոսմ գալ...:

Յամի տեառն 1750
յունվարի 31
[Հոովմ]

Խոնարհագոյն Ծառայ
Պատկերահան Յոհաննէս

ՃԾ.

Սարաֆեան Արքեպս.ի երկոտասաներորդ նամակն է որ լոյս կը տեսնէ հոս:

Չայս կ'ուղղէ առ Մեղգոնեան Աբրահայր, առաջին Յաջորդ Մխիթարայ, յայտնելով իր սաստիկ զայրոյթը ընդդէմ Անտոնի Պոռթոլի, որուն յանձներ էր իր երկոց տպագրութեան գործը: Սարգիս կը թելադրէ Մեղգոնեանը, որ ինքն ալ իր կարգին թողու սոյն տպագրատունը, իր դատին թիկունք ունենալու նպատակաւ: